



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ  
ՏՆՕՐԵՆ**

« 06 » \_\_\_\_\_ 07 \_\_\_\_\_ 2020թ.

№ 08/ԼԱ/-157

**Հունիսի 29-ից հուլիսի 5-ը դիտված հիդրոոդերևութաբանական  
պայմանները ՀՀ-ում**

Հունիսի 30-ին, հուլիսի 1-ին, 4-5-ին առանձին շրջաններում դիտվել է անձրև և ամպրոպ:

Տեղումների առավելագույն գումարային քանակը գրանցվել է Թալինում՝ 25մմ, Երևան Աերոլոգիականում՝ 22մմ, Մեղրիում՝ 19մմ, Ամասիայում՝ 17մմ, Սեմյոնովկայում և Շորժայում՝ 15մմ, Ջերմուկում՝ 14մմ, մնացած շրջաններում 1-8մմ քանակությամբ:

Օդի միջին օրական ջերմաստիճանը հունիսի 29-30-ին, հուլիսի 1-2-ին եղել է նորմային մոտ բացասական և դրական շեղումներով, 3-5-ին բարձր է եղել նորմայից 1-2աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է Արարատյան դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում, Կոտայքի նախալեռներում՝ +33...+35°C, Սյունիքի հովիտներում +31...+33°C, Տավուշում՝ +29...+34°C, Լոռիում և Սյունիքի նախալեռներում՝ +24...+29°C, Շիրակում, Կոտայքում, Գեղարքունիքում, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում՝ +22...+27°C աստիճան տաքությամբ:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում +5...+10°C (Աշոցքումում +4°C), Լոռիում և Սյունիքի նախալեռներում՝ +7...+12°C, Կոտայքի և Արագածոտնի նախալեռներում՝ +13...+15°C, Տավուշում, Արարատյան դաշտում, Վայոց Ձորի նախալեռներում, Սյունիքի հովիտներում՝ 13...+17°C:

Հուլիսի 4-ին Թալինում, Արմավիրում և Աշտարակում դիտվել էքամի՝ 10-20մ/վրկ, պոռթկումների ժամանակ՝ 19-25մ/վրկ արագությամբ:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում դիտվել է փոփոխական ռեժիմ:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 2սմ-ով և կազմել 1900.82 մ (05.07.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա համեմատությամբ բարձր է 1սմ-ով:

Հարգանքով՝  
Տնօրենի ժ/պ

Լ. Ազիզյան